ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵԻՈՏ՝
ՆՎԻՐՎԱԾ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 21-ին Երևանում, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում կայացավ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստ, որին ներկա էին մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ բանվորներ, ժառայողներ, գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, ուսանողներ։ Նիստին մասնակցում էին նաև եղբայրական Վրաստանից ժամանած հյուրեր։

Հոբելյանական հանձնաժողովի նախագահ բանաստեղծ Գեղամ Սարյանը, բացելով հանդիսավոր նիստը, համառոտակի բնութագրեց Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմի գաղափարական ու գեղարվեստական այն արժանիքները, որոնք նրան դասում են համաշխարհային գրականության գլուխգործոցների շարքում։ Շոթա Ռուսթավելին,— ասաց նա,— իր մեծ արվեստի շնորհիվ հարյուրամյակներ շարունակ գերել է շատ ու շատ սերունդների, սիրելի դարձել ոչ միայն վրաց, այլև աշխարհի բոլոր ժողովուրդներին։

Բացման խոսքից հետո զեկուցումով հանդես եկավ Նաիրի Զարյանը։

«Վագրենավորը» վիպերգությունը,— ասում է նա,— վրաց բազմադարյան հոգևոր մշակույթի պսակն է, համաշխարհային պոեզիայի գոհարներից մեկը։ Շոթա Ռուսթավելին, հանդես գալով մի ժամանակաշրջանում, երբ Վրաստանը հասել էր իր հզորության ու ծաղկման գագաթնակետին, բանաստեղծական տողերում մարմնավորեց եղբայրության, սիրո, խաղաղության ու երջանկության համամարդկային ձգտումները, և այդ բոլորի շնորհիվ նրա պոեմը ձեռք է բերել անմրցելի ժողովրդայնություն։ «Վրաստանի գրականության այդ անգերազանց կոթողը,— շարունակում է զեկուցողը,— անապատում բուսած մի ծառ չէր։ Նրա արմատները թաղված էին այն ժամանակվա Արևելքի գաղթականներ ապրարարող հոգևոր շատ երևույթների մեջ։ Հիշենք Նիզամիի, Նավոյիի և Արևելքի մյուս հսկաների ստեղծագործությունները, Նարեկացու, Շնորհալու երկերը, Վարդան Այգեկցու առակները, հանձարեղ «Սասունցի Դավիթ» էպոսը և այլն։

Զեկուցման վերջում Ն. Զարյանը խոսեց այն սիրո ու գնահատանքի մասին, որին արժանացել է Ռուսթավելու պոեմը հայ իրականության մեջ։

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Մկրտիչ Ներսիսյանը խոսեց ռուսթավելագիտության մեջ հայ բանասերների ներդրած խոշոր ավանդի մասին։ Նա հայտնեց նաև, որ շուտով Երևանի պետական համալսարանում ստեղծվելու է Ռուսթավելու անունը կրող գիտահետազոտական կաբինետ, որը դառնալու է վրաց բազմադարյան գրականության ուսումնասիրության կենտրոն մեր հանրապետությունում։

Հոբելյանական նիստում ելույթներ ունեցան նաև հանրապետության ժողովրդական արտիստ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդուարդ Միրզոյանը, վրաց բանաստեղծ Ալիո Միրցխուլավան, Հովհաննես Շիրազը, վրաց բանաստեղծ Ռևազ Մարգիանին արտասանեց Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակին նվիրված իր բանաստեղծությունը։

Հանդիսավոր նիստն ավարտվեց Վրաստանի և Հայաստանի արվեստի անվանի վարպետների համերգով։

Ա. ՍԱՂՈՄՈՆՅԱՆ

ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՄԱԲԱՆԸ
(Ի. Պ. Կրիպյակևիչի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ եղբայրական Ուկրաինայի մեծավաստակ գիտնական, հանրապետության ակադեմիայի իսկական անդամ Իվան Պետրովիչ Կրիպյակևիչի ծննդյան 80 և գիտական ու հասարակական գործունեության 60-ամյակը։

Մեծ է նրա վաստակը ինչպես Ուկրաինայի, Ռուսաստանի ու Լեհաստանի, այնպես և Ուկրաինայի հայ գաղթավայրերի և հայ-ուկրաինական պատմական կապերի ուսումնասիրության բնագավառում։



Իվան Պետրովիչը ծնվել է 1886 թ. հունիսի 25-ին։ 1904 թ. ընդունվում է Լվովի համալսարան։ Նա դեռևս 1907 թ. հրատարակում է «Լվովյան Ռուսիան XVI դ. առաջին կեսին» մենագրությունը, որով ներկայացնում է միջնադարյան քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքը, դասերը, դասակարգային պայքարը, ազգային ու կրոնական փոխհարաբերությունները Լվովի բազմազգ բնակչության մեջ։ 1911 թ. Կրիպյակևիչը դառնում է Տ. Ռ. Շևչենկոյի անվան գիտական ընկերության պատմա-փիլիսոփայական սեկցիայի անդամ՝ ծավալելով եռանդուն գործունեություն։

Իվան Պետրովիչի գիտական գործունեության առավել արդյունավետ շրջանը զուգադիպեց Արևմտյան Ուկրաինան մայր երկրի հետ վերամիավորվելու ժամանակաշրջանին, երբ նա նվիրվեց Սովետական Ուկրաինայի պատմական գիտության զարգացմանը, նշանակվելով Լվովի համալսարանի պրոֆեսոր և Ուկրաինայի պատմության ամբիոնի վարիչ, 1951 թ. ուկրաինական ակադեմիայի Լվովի ֆիլիալի հասարակական գիտությունների ինստիտուտի պատմության բաժնի վարիչ, ապա և ինստիտուտի դիրեկտոր։ 1958 թ. նա ընտրվում է ուկրաինական ակադեմիայի ակադեմիկոս, 1961 թ. ստանում է գիտության վաստակավոր գործչի կոչում։

Համալսարանում և հասարակական գիտությունների ինստիտուտում աշխատելու ընթացքում նշանավոր գիտնականը ուսումնասիրում է իր ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը և կապերը հարևան ժողովուրդների հետ, հրատարակում ժողովածուներ, մենագրություններ, հոդվածներ։ 1953 թ. նա հրատարակում է իր ուշագրավ մենագրությունը «Արևմտյան Ուկրաինայի հարաբերությունները Ռուսաստանի հետ մինչև XVII դարի կեսերը», իսկ 1954 թ.՝ «Բոգդան Խմելնիցկի» մոնումենտալ ուսումնասիրությունը։ 1955 թ. Ի. Պ. Կրիպյակևիչը ձեռնարկեց նաև Ուկրաինայի քաղաքների պատմության ուսումնասիրության գործը։

Մեծավաստակ գիտնականը իր կյանքի ավելի քան 60 տարին նվիրել է պատմագրությանը՝ հրատարակելով մոտ 600 խոշոր ու մանր աշխատություններ (տե՛ս վերջերս հրատարակված մատենագրությունը նրա մասին[1])։

Կրիպյակևիչը հայտնի է ոչ միայն որպես պատմաբան, աղբյուրագետ, աշխարհագրագետ, հրապարակախոս, ժուռնալիստ, այլ նաև որպես մանկավարժ, դասախոս, գիտության գործուն սրոպագանդիստ։

Մեծ է ակադեմիկոս Կրիպյակևիչի դերը Ուկրաինայի ու Լեհաստանի հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության գործում։ Նրա ղեկավարությամբ և օգնությամբ մշակված ծրագրով տասնյակ ուկրաինացի գիտնականներ սկսեցին ուսումնասիրել հայ-ուկրաինական պատմական կապերն ու հայ գաղութները, այդ աշխատանքները հանրագումարի բերելով 1959 թ. Երևանում, ապա 1962 թ. Կիևում ու Լվովում հրավիրված համատեղ գիտական նստաշրջաններում։ Ինքը՝ Իվան Պետրովիչը, հանդես եկավ նույն նստաշրջաններում «Լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչը» (1959 թ.) և «Լվովի հայ գաղութի սկզբնավորման հարցի շուրջը» (1962 թ.) գիտական զեկուցումներով։

Հայկական գաղութների և հայ-ուկրաինական կապերի հարցը ակադեմիկոս Կրիպյակևիչին զբաղեցրել է դեռևս ուսանողական տարիներին՝ սրանից 60 տարի առաջ։ 1907 թ. հրատարակած մենագրության մեջ նա ուշադրություն է հրավիրում լվովահայ գաղութի պատմության տարբեր փաստերի վրա, հայ-ուկրաինական կապերի վրա։

Այժմ՝ 60 տարի անց, ակադեմիկոս Կրիպյակևիչը շատ ավելի բազմակողմանի է ներկայացնում ժողովուրդների բարեկամության պատմական արմատները, իր երիտասարդ գրչակիցներին ու աշակերտներին մղելով դեպի այդ կարևոր հարցերի ուսումնասիրության ընդարձակ։

Վ. ՍԱԿԱՆՅԱՆ

---

[1] І. П. Крип'якевич. Бібліографичний покажчик. Львів, 1966.